ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 128-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն՝ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել՝ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների /հավելվածները կցվում են/:

2. Դիլիջան համայնքի ղեկավարին՝ Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

3. Սույն որոշման 1-ին կետը ուժի մեջ է մտնում Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և

պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին իրավական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

4. Ուժը կորցրած ճանաչել Դիլիջանի համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 25-ի թիվ 123-Ա որոշումը:

5.Սույն որոշման դրույթները տարածվում են 2018թ. հունվարի 1-ից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

5. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

6. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

7. ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

8. ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**

Հավելված 2
ՀՀ Տավուշի մարզի
Դիլիջան համայնքի ավագանու
2017թ. --30.11---ի N 128-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 63:

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հասարակային մեկ միավորի համար)
	ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
1.	Համայնքի ղեկավար	1	450000
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	360000
3.	Վարչական ղեկավար	6	200000
4.	Համայնքի ղեկավարի խորհրդական	3	155000
5.	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար	1	155000
6.	Համայնքի ղեկավարի օգնական	2	125000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
7.	Աշխատակազմի քարտուղար	1	340000
	Ֆինանսական բաժին		
8.	Բաժնի պետ	1	320000
9.	Գլխավոր մասնագետ-հաշվապահ	1	155000
10.	Գլխավոր մասնագետ	3	155000
11.	Առաջատար մասնագետ	9	125000
12.	Առաջին կարգի մասնագետ	2	105000
	Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին		
13.	Բաժնի պետ	1	320000
14.	Գլխավոր մասնագետ	1	155000
15.	Առաջատար մասնագետ	2	125000
16.	Առաջին կարգի մասնագետ	1	105000
	Ներքին աուդիտի բաժին		
17.	Բաժնի պետ	1	320000

18.	Առաջատար մասնագետ-աուդիտոր	1	125000
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին			
19.	Բաժնի պետ	1	256700
Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ)			
20.	Գլխավոր մասնագետ	4	155000
	Գլխավոր մասնագետ-իրավաբան	1	155000
21.	Առաջատար մասնագետ	1	125000
22.	Առաջին կարգի մասնագետ	2	105000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
23.	Համակարգչային օպերատոր	2	105000
24.	Համակարգչային սարքեր սպասարկող	1	105000
25.	Ավտոպարկի կառավարիչ	1	150000
26.	Հավաքարար	4	80000
27.	Պահակ	2	80000
28.	Տնտեսվար	1	80000
29.	Տնտեսվար	1	105000
30.	Գործավար	1	105000
31.	Գործավար	1	80000
32.	Վարորդ	1	105000
33.	Վարորդ	1	90000
ԸՆԴԱՄԵՆԸ		63	9646665

Հավելված 1
ՀՀ Տավուշի մարզի
Դիլիջան համայնքի ավագանու
2017թ. 30.11 -ի N 128-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Ֆինանսական բաժին
2. Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին
3. Ներքին աուդիտի բաժին

ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին